ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- օգոստոսի 2023 թվականի №--- -Ա
ք. Երևան

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆԸ (ԱՄՐԱՑՄԱՆԸ) ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի օգոստոսի 2-ի № ԱՂ/310-2023, օգոստոսի 3-ի №ԱՂ/312-2023, օգոստոսի 10-ի №ԱՂ/317-2023 և օգոստոսի 11-ի №ԱՂ/319-2023 գրություններով (այսուհետ՝ Հայտ) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և հայտնել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսվում է Ընկերության կողմից տեղաբաշխված՝ պետությանը պատկանող համապատասխան թվով հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռքբերման միջոցով նվազեցնել Ընկերության կանոնադրական կապիտալը և բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարել իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Հայտին կից №1 և №2 հավելվածներում նշված գույքով: Ուստի Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովի համաձայնությունը Հայտին կից №1 և №2 հավելվածներում նշված՝ Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն համաձայնեցման ենթակա գույքի (այսուհետ՝ Գույք)՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին փոխանցման (ամրացման) համար,

բ) Հանձնաժողովի կողմից Գույքի փոխանցմանը (ամրացմանը) համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում

էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանն ու պետական շահերին, Ընկերության ներկայացրած փաստաթղթերը և տեղեկատվությունը համապատասխանում են Հանձնաժողովի սահմանած կարգի պահանջներին, իսկ անհրաժեշտ փորձ ունեցող անձի վերաբերյալ դրույթը Գույքի փոխանցման (ամրացման) նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը պատկանող՝ Հայտին կից №1 և №2 հավելվածներում նշված՝ Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն համաձայնեցման ենթակա գույքի՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին փոխանցմանը (ամրացմանը):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոխանցման (ամրացման) ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ Գույքի փոխանցումից (ամրացումից) հետո անհրաժեշտ է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Գույքի փոխանցումը (ամրացումը) հաստատող փաստաթղթի պատճենը:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
---- օգոստոսի 2023 թ.